

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ԵՊՀ-ի Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2023 թվականի նոյեմբերի 27-ին կայացած Գիտական Խորհրդի N4 նիստի

Նախագահ – Ս.Ս.Քելյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 32 անդամներից 28-ը (ցուցակը կցվում է)

Խորհրդի նախագահ Ս.Ս.Քելյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և
քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Հանդիպում Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հ.Վ.Հովհաննիսյանի հետ
2. «Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման արդյունքների քննարկում
/զեկ. գրասենյակի ղեկավար Գ.Փ.Ալեքսանյան/
3. «Մերվիսի» ամբիոնի վարիչի հաշվետվությունը ամբիոնում կատարած աշխատանքների վերաբերյալ
/զեկ. ամբիոնի վարիչ Ս.Ռ.Սուվարյան/
4. Գիտական հաղորդում
/զեկ. Սոց.-տնտ. աշխ.ամբիոնի հայցորդ Լ.Հակոբյան/
5. Դոցենտի կոչման շնորհում
6. Ընթացիկ հարցեր

Մինչ հաստատված օրակարգի հարցերի քննարկմանն անցնելը, տեղի ունեցավ ԵՊՀ ոսկե մեդալի հանձնումը դոցենտ Ա.Հ.Պոտոյանին: Համալսարանի ռեկտոր պարոն Հ.Հովհաննիսյանը շնորհավորեց Ակսել Պոտոյանին պարգևատրվելու առիթով և ցանկացավ բեղմնավոր աշխատանքային գործունեություն:

1. **ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ ռեկտոր Հ.Վ.Հովհաննիսյանն ընդհանուր գծերով ներկայացրեց ԵՊՀ զարգացման նախագծերը, խոսեց առկա խնդիրների մասին՝ կապված ուսումնական գործընթացի կազմակերպման, կարգապահության բարձրացման, միջազգային ծրագրերի

մասնակցության և իրականացման վերաբերյալ, ինչպես նաև էլեկտրոնային համակարգերի ներդրման և դրանց արդյունավետության մասին: Ռեկտոր Հ.Հովհաննիսյանը բավականին մանրամասն ներկայացրեց համալսարանի կողմից իրականացված աշխատանքները՝ տեղափոխված արցախցիներին աջակցության ծրագրերի մշակման և ներդրման ուղղությամբ:

Խորհրդի անդամների կողմից պրն. Հ.Հովհաննիսյանին ուղղված հարցերին տրվեցին բավարար պատասխաններ:

2. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Գրասենյակի ղեկավար Գ.Փ.Ալեքսանյանի հաղորդումը **«Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման արդյունքների** վերաբերյալ: Նշեց, որ սոց հարցմանը մասնակցել են քիչ թվով ուսանողներ՝ մոտ 14%: Հաղարդման ընթացքում Գ.Ալեքսանյանը ներկայացրեց ֆակուլտետի, դեկանատի և ամբիոնների գնահատված տվյալների միջին արդյունքները:

ՀԱՐՅԵՐ ՏՎԵՑԻՆ. դոց.դոց.Շ.Վ.Խաչատրյանը, Ս.Հ.Հայրոյանը: Փորձեցին ճշնել գնահատված դասախոսների անհատական գնահատականները:

ԵԼՈՒՅԹ ՈՆՆԵՑԱՆ. Ֆակուլտետի դեկան Ս.Ս.Քելյանը կոչ արեց ամբիոնի վարիչներին ուշադրության կենտրոնում պահել և ամբիոններում քննարկել գնահատման արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ամբիոններում քննարկել գնահատման արդյունքները և ներառել հերթական խորհրդի նիստի օրակարգային հարցերի ցանկում:

3. ԼՍԵՑԻՆ. Սերվիսի ամբիոնի վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերբերյալ: (Հաշվետվությունը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ.Վ.Պ.Վարդանյանը խոսեց Ս.Սուվարյանի աշխատասիրության, պատասխանատվության ամբիոնի հանդեպ սրտացավ լինելու մասին: Առաջարկեց Ս.Սուվարյանի ներկայացրած հաշվետվությունը գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել Սերվիսի ամբիոնի վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանի հաշվետվությունը և ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել բավարար:

4. ԼՍԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի հայցորդ Լ.Հակոբյանի «ՀՀ-ում տեխնիկական մշակաբույսերի զարգացման և տարածքային կազմակերպման ագրոաշխարհագրական հիմնախնդիրները» վերնագրով գիտական հաղորդումը:

ԵԼՈՒՅԹ ՈՆՆԵՑԱՆ. դոց.դոց.Շ.Վ.Խաչատրյանը, Ս.Ռ.Սուվարյանը, Գ.Փ.Ալեքսանյանը, Ա.Հ.Պոտոսյանը, ովքեր նշեցին, որ ներկայացված հաղորդման մեջ կան գիտական մտքի ոչ հստակ ձևակերպումներ: Անհրաժեշտ է այն լրամշակել աշխատանքը՝ հաշվի առնելով արված դիտողությունները և մասնագիտական ուղղորդումները, մեկ անգամ ևս քննարկել ամբիոնում և ներկայացնել գիտական խորհրդին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի հայցորդ Լ.Հակոբյանի «ՀՀ-ում տեխնիկական մշակաբույսերի զարգացման և տարածքային կազմակերպման ագրոաշխարհագրական հիմնախնդիրները» վերնագրով գիտական աշխատանքի քննարկմանն անդրադառնալ դիտողությունները վերանայելուց, աշխատանքը խմբագրելուց և ամբիոնում քննարկելուց հետո:

5. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Վարդանյանի հաղորդումը **Սոցիալ-տնտեսական աշխարհագրության** ամբիոնի ասիստենտ, աշխարհագրական գիտությունների թեկնածու Էլիզա Ռաֆիկի Դուրգարյանի դոցենտի կոչում ստանալու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին: Պրոֆ.Վարդանյանը նշեց, որ Էլիզա Դուրգարյանի գիտամանկավարժական գործունեությունը, աշխատանքային ստաժն ու ներկայացված փաստաթղթերը բավարարում են դոցենտի կոչում ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Մրցութային հանձնաժողովը որոշել է հարգել Է.Ռ.Դուրգարյանի դիմումը և միջնորդում է ֆակուլտետի գիտական խորհրդին այն դնել քննարկման:

ԵԼՈՒՅԹ ՈՐՆԵՑԱՆ. պրոֆ.Վ.Պ.Վարդանյանը, դոց.դոց.Վ.Վ.Գրիգորյանը, Շ.Վ.Խաչատրյանը: Նրանք, բարձր գնահատելով Է.Ռ.Դուրգարյանի գիտամանկավարժական

գործունեությունը ֆակուլտետում, գտնում են, որ նա արժանի է դոցենտի կոչում ստանալու և առաջարկեցին հարցը դնել փակ (գաղտնի) քվեարկության:

Փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ դոց.Ակսել Հարությունի Պոտոսյան, անդամներ՝ դոց.Սեյրան Ռաֆիկի Սուվարյան, ուս.Նարե Տիգրանի Մխիթարյան:

ԼՄԵՑԻՆ. Հաշվիչ հանձնաժողովի նախագահ դոց. Ակսել Հարությունի Պոտոսյանի հաղորդումը փակ (գաղտնի) քվեարկության անցկացման արդյունքների վերաբերյալ, ըստ որի, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 32 անդամներից քվեարկության մասնակցել են 24-ը: **Էլիզա Ռաֆիկի Դուրգարյանին** դոցենտի կոչում շնորհելու համար **ԿՈՂՄ** են քվեարկել **16-ը, ԴԵՄ՝ 4, ԱՆՎԱՎԵՐ՝ 4:**

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ և **Էլիզա Ռաֆիկի Դուրգարյանին** շնորհել դոցենտի գիտական կոչում:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ս.Ս.Քեյյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Ե.Ս.Մանուկյան